

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 18.10.2018թ. նիստի

Նիստը կայացավ հեռահար կապի միջոցով: Հաղորդագրություններ են ուղարկվել գիտական խորհրդի 27 (քսանյոթը) անդամներին:

Առաջարկություններ և համաձայնություններ են ուղարկել գիտական խորհրդի 23 անդամներ.

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **. Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
5. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
6. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
7. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
8. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
9. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
10. **Սարգոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
11. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
12. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ- ուսումնական մասի պետ
13. **Տեր-Ադամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
14. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

- 15. Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
- 16. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
- 17. Ղազարյան Ջեմմա Կարոյի** — ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ, Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Լրագրություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
- 18. Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անզլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
- 19. Խաչատրյան Աննա Արմենի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Սոցիալական աշխատանք», 3-րդ կուրսի ուսանողուհի
- 20. Ավագյան Էլմիրա Սոսի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մեթոդիկա» 3-րդ կուրսի ուսանողուհի
- 21. Հարությունյան Քաջիկ Հակոբի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)
- 22. Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռազմական ամբիոն, «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանող
- 23. Չարչոլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

- 1. 2018-2019 ուստարում ՇՊՀ-ի բակալավրիատի առկա, հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման համակարգի մասին**
Հաղ.՝ Ռե կտորի պարտականություններ կատարող Ե. Մերոբյան
- 2. ՇՊՀ-ում որակավորման քննությունների կազմակերպումն այլ բուհերի հայցորդների և ասպիրանտների մասնակցության դեպքում**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

- 3. Տեղափոխվող ակադեմիական պարտքերի վերահանձման կամ կրկնման համար համալսարանում նախատեսվող վճարի չափի մասին**

Հաղ.՝ Ռե կտորի պարտականություններ կատարող Ե. Մերոբյան

1. ԼՍԵՑԻՆ՝

2018-2019 ուստարում ՇՊՀ-ի բակալավրիատի առկա, հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման համակարգի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

10.10.2018թ.-ի թիվ 03 ռեկտորոսի որոշմամբ «ՇՊՀ-Ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» հարցի վերաբերյալ 19/1 որոշման մեջ պարզաբանումներ և լրացումներ կատարելու նպատակով ընդհանրացվեցին գիտական խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված կարծիքներն ու առաջարկները:
(19/1 որոշման մեջ կատարված լրացումներն ընդգծված ներկայացվում են).

1. Գնահատման բաղադրիչներից ընթացիկ ակտիվությունը հաշվարկել գնահատված ընթացիկ ստուգումների (գրավոր, բանավոր՝ միտված դասընթացի վերջնարդյունքների), **սեմինարների, գործնական և լաբորատոր աշխատանքների** միջին թվաբանականով: Վերջիններս գրառել մատյանում և դրանց թիվը որոշել վերջնարդյունքների, **սեմինարների, գործնական և լաբորատոր աշխատանքների** քանակով:
2. Ընթացիկ ստուգման վերահանձնում չի թույլատրվում:
Ընթացիկ ստուգումից հարգելի պատճառով բացակայության դեպքում մինչև հաջորդ ստուգումը թույլատրվում է հանձնելու նախորդը:
3. Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64 և ավելի է, համարել միջանկյալ ստուգումներով ավարտվող 4 գործոնով դասընթաց և «ստուգում 1», «ստուգում 2» տերմինները փոխարինել «միջանկյալ ստուգում 1», «միջանկյալ ստուգում 2» տերմիններով: Այս դեպքում բազմագործոնային գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\text{բազմագործոնային գնահատակ.} = \langle \text{ընթ. ակտիվ. գն.} \rangle * 0,3 + \langle \text{հաճախումներ} \rangle * 0,1 + \\ + \langle \text{միջ. ստուգ. 1 գն.} \rangle * 0,3 + \langle \text{միջ. ստուգ. 2 գն.} \rangle * 0,3$$

Դասընթացը, որի լսարանային ժամաքանակը 64-ից պակաս է, համարել ամփոփիչ ստուգմամբ ավարտվող 3 գործոնով դասընթաց: Այս դեպքում բազմագործոնային գնահատականը ձևավորվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\text{բազմագործ. գն.} = \langle \text{ընթացիկ ակտիվ. գն.} \rangle * 0,3 + \langle \text{հաճախումներ} \rangle * 0,1 + \\ \langle \text{ամփոփիչ ստուգ. գն.} \rangle * 0,6$$

4. Եթե ուսանողի արդյունարար գնահատականը 40 և ավելի է, ապա ուսանողը ստանում է համապատասխան կրեդիտը՝ առանց վերահանձնման հնարավորության, իսկ եթե այն 40-ից պակաս է, ապա ուսանողը վերահանձնում է կամ ամփոփիչ ստուգումը (3 գործոնի դեպքում) կամ համապատասխան միջանկյալ ստուգում /ները/ (4 գործոնի դեպքում):
5. Բազմագործոնային գնահատականը հաշվելիս վերահանձնված ստուգման միավորը փոխարինում է համապատասխան միավորին:
*Վերոգրյալ փոփոխությունները վերաբերում են միայն բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների գնահատման բաղադրիչներին ու կշիռներին, իսկ բակալավրի հեռակա և մագիստրոսական

համակարգերում սովորող ուսանողների գնահատման բաղադրիչներն ու կշիռները հաշվարկվում են նախորդ տարի կիրառված սկզբունքով (հիմք՝ 25.08.2017թ.-ի գիտական խորհրդի «ՇՊՀ-Ի ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 19/1 որոշումը):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
23 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ

ՇՊՀ-ում որակավորման քննությունների կազմակերպումն այլ բուհերի հայցորդների և ասպիրանտների մասնակցության դեպքում

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Այլ բուհերի հայցորդների և ասպիրանտների համար ՇՊՀ-ում կազմակերպվող որակավորման քննությունների մասնակցության վճար սահմանել 30. 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Տեղափոխվող ակադեմիական պարտքերի վերահանձման կամ կրկնման համար համալսարանում նախատեսվող վճարի չափի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Տեղափոխվող ակադեմիական պարտքերի վերահանձման կամ կրկնման համար համալսարանում նախատեսվող վճարի չափը որոշվում է (անկախ ուսուցման ձևից) հետևյալ կերպ.

Տվյալ ՄԿԾ-ի (մասնագիտական կրթական ծրագրի) համար նախատեսված տարեկան արժեքը (բոլոր տարիների) բաժանվում է տարվա ընթացքում կուտակվող կրեդիտների քանակին (240-ի):

2. Այն դասընթացները, որոնց համալսարանում կրեդիտներ չեն հատկացված («Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Էկոլոգիա, ֆիզիկական դաստիարակություն) ակադեմիական պարտքերի վերահանձնումը կատարվում է առանց վճարման՝ լուծարքային շրջանում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ ռեկտորի ԺՊ՝

Ե. Սերոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Կ. Պետրոսյան